

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

### ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2000թ. հունվարի 18-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի:

Հայկական կողմից հանձնաժողովի նախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարը: Հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 2000թ.-ին Մինսկում: 13-րդ նիստը կայացել է Մինսկում 2017թ. հոկտեմբերի 20-ին: